

ՀԱՅԱԳԻՐ ԴՊՐՈՒԹԵԱՆ ԾՐԳՐԻՑ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՅՐ ԱՆԱՆԻԱ ԾԻՐԱԿԱՑԻՆ ԵՒ ԻՐ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ-ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ

L. Գ. Խաչերեան

Դաւթեան կրթական ծրագրի համաձայն, «Ուսումնական» առարկան թուերի տեսութիւնն է՝ ամենալայն առումով, համարողական գիտութիւնն է՝ ամենանեղ առումով: Տեսական մտածողութեան ըմբռնմամբ՝ յոյժ կարեւոր նշանակութիւն ունի առհասարակ գիտութիւնների համար «Քանակ»ի վերաբերեալ ուսմունքի իւրացումը: Ըստ անտիկ փիլիսոփայութեան հարցադրման՝ բոլոր իրերը, երեւոյթները իրենց բաղադրիչ տարրերով կամ միատրոպով քանակային կազմութիւն ունեն տիեզերական ընդգրկմամբ: Այն հիմնական դրոյթը, ըստ որի իրերի եւ երեւոյթների բաղադրիչ տարրերի կամ միաւորների քանակը «տարրորդ» կամ «շարունակ» դասաւորմամբ կերտուածք ունեն՝ խորաքնին դիտարկման արդիւնք է անշուշտ: Ըստ որում՝ բնութեան եւ հասարակութեան իրերի ու երեւոյթների բաղադրիչ տարրերի կամ միաւորների քանակն ամբողջութեամբ երկակի դասաւորութիւն ունի՝ ա/ «տարրորդ», միմեանց հակադրուած առանձնակի հատոյթներով կամ մասնիկներով, եւ բ/ «շարունակական» (իրենց տերմինով՝ «շարունակ»)՝ բաղադրիչ տարրերի կամ միաւորների համահարթմամբ ու միաձուլմամբ: Տեսական ձեւակերպումն է. «Եւ քանակն է՝ ինչ որ տարրորդ է, եւ է՝ ինչ որ շարունակ»¹: Առաջին կարգին են պատկանում՝ թիւը (համաբարային յարաբերութիւնը) եւ լեզուն. երկրորդ կարգին են պատկանում՝ գիծը, մակերեւոյթը, մարմինը, ժամանակը, տարածութիւնը. «Եւ է տարրորդեալն, որոգն՝ թիւ, քան՝ եւ շարունակն, որգան՝ գիծ,

մակերեւոյթիւն, մարմին. եւ առ այսոքիւք եւս ժամանակ եւ տեղի»²:

Նախ՝ «տարրորդով քանակի» ըմբռնման մասին: Հարցի պարզաբանումը ընկալելի դարձնելու համար դիմենք օրինակի. թիւը իրենից ներկայացնում է «տարրորդ քանակ», այսինքն թուական միաւորների միջեւ շօշափելի ո՛չ մի ընդհանրութիւն հաստատել հնարաւոր չէ, այդ պատճառով էլ թուական միաւորները սահմանազատիչ տարրորդութեամբ են դրսեւորում իրենց գոյը: Այսպէս, տասի բաղադրուցիչ միաւորները կրկնակի հինգեր են, կամ երեքը եւ եօթը եւ այլն. բայց սրանք իրար հետ ձուլուող շօշափելի եզրեր չեն կազմում ամենեւին, այլ սահմանազատիչ տարրորդմամբ են հանդէս գալիս. հէնց դրա շնորհիւ պահպանում են իրենց առանձին հասկացութիւնները անկախաբար՝ հինգ+հինգ, կամ՝ եօթ+երեք եւլն.: Հինգը հնգի հետ չի ձուլուում, այլ ընկալուելիս անջատաբար իրերե թուեր գումարում են, եւ ո՛չ թէ իրերե յարաձիգ միասնութիւն ձուլուում. այստեղից հետեւութիւն՝ թուի կարգը քանակի անջատուող ու միացող հատոյթների («տարրորդ»ների) դասին է պատկանում. «Քանգի թուոյն մասնակաց ոչ ինչ է հասարակ սահման առ որ շարամաւտին (իմա՝ «ձուլուեն» - Լ. Խ.) մասնկուենքն իւր: Հիկէն՝ հինգքն տասանցն մասնկուենք են, եւ առ ո՛չ մի ինչ հասարակ սահման շարամաւտին հինգն եւ հինգն, այլ տարրորդեալք են. եւ երեքն, եւ եւաթանքն առ ո՛չ մի ինչ հասարակ սահման շարամաւտին: Եւ ոչ բնաւ ամենեւին

գտցես ի վերայ թուոյ առնուլ հասարակ սահման մասնակացն, այլ միշտ տարրորդեալ է. ապա ուրեմն թիւ ի տարրորդելոցն է»³:

Անշուշտ, լեզուի տեսութեան համար առաւել գիտական հետաքրքրութիւն է ներկայացնում հէնց լեզուի բնոյթի որոշումը քանակային տեսութեան առումով իրերե հատոյթային տարանջատման երեւոյթ, որը ճկուն է՝ ե՛ր միաճալու, ե՛ր անջատուելու իւրայատկութեամբ իր բաղադրուցիչ միատրոպով:

Լեզուն «ստորաչափուում» է վանկերով («փաղառութեամբք»), ըստ որում՝ սուղ եւ երկար վանկերով. ի դէպ՝ լեզուն իր գոյը չի դրսեւորում իր բաղադրիչների ձուլման համահարթութեամբ որպէս միապաղաղ ու միօրինակ սահուն հոսք, այլ՝ լեզուն իր գոյը դրսեւորում է իր բաղադրիչների միջեւ առկայ սահմանազատիչ եզրերի տարրորդութեամբ ու հակադրութեամբ. ընդամիւս այդ շղթայում իւրաքանչիւր լեզուական միաւոր «ինքն ըստ ինքեան ուրոյն» է լինում. «Եւ զի քանակ է քան, երեւելի է քանգի ստորաչափի փաղառութեամբ՝ սղիւ եւ երկարաւ, եւ ասեմ զնոյն զինքն, որ ձայնիւն ման անորա մասունքն շարամաւտին, քանգի ո՛չ է հասարակ սահման՝ առ որ փաղառութիւնքն շարամաւտին, այլ իւրաքանչիւր ոք տարրորդեալ է՝ ինքն ըստ ինքեան ուրոյն»⁴: Այս հարցադրմամբ ընդգծուում է լեզուի յօդաբաշխ լինելը, որը նրա էական ու հիմնական առանձնապատկանութիւնն է:

Վահրամ Բաբունին ճշտում է հատոյթայնութիւնը լեզուի՝ քանակային առումով, պնդելով որ այն վերաբերում է ո՛չ թէ մտածութեանը կամ հասկացութեանը («քան»իմ) ա՛յլ՝ լեզուականօրէն արտաբերուող նախադասութեանը կամ բառին. «Ո՛չ զայն բանն ասէ, որ ի խորհուրդն է, այլ զայն, որ յառաջ գայ ի բերանոյն

բղխեալ ձայնիւ: Եւ թէ ո՞րք են սորա մասունքն, եւ զիա՞րդ ոչ է շարունակ՝ մեկնիչդ ցուցանէ»⁵:

Բացի այդ՝ արիստոտելեան դրոյթն այն մասին, որ քերականութիւնը (ինչպէս եւ ամէն մի գիտութիւն) բնորոշուում է իրերե «ենթակայական երեւոյթ», այսինքն՝ այն գտնուում է ենթակայի իմացականութեան (կամ բանականութեան) ուրոտում: Վարհրամ Բաբունին այդ կարեւոր դրոյթը մեկնում է իրերե այնպիսի լեզուական գիտելիքների հանրագումար, որ գտնուում է այս կամ այն քերականի գիտակցութեան մէջ իրերե պատահական՝ ձեւաբերովի (եւ ո՛չ բնական) յատկանիչ. «Լուծումն. Ձենթակայէ ասի քերականութեան մակացութիւն (իմա՝ «գիտութիւն», Լ. Խ.) եւ նենթակայ, այսինքն՝ պատահումն անձին»⁶:

Իսկ ընկալուելու դէպքում էլ քերականութիւնը իրերե «պատահական յատկանիչ» մարդու հոգում՝ ոչ թէ իր մի մասով մէկի, իր մի այլ մասով միւսի ուղեղում է ընկալուում, այլ՝ ամբողջութեամբ ըմբռնելի է այս կամ այն ուսումնականի բանականութեան մէջ: Ծիշտ նականի բանականութեան մէջ: Ծիշտ այդպիսիք են նաեւ գոյները բնութեան մէջ. եթէ մի բոյս կամ առարկայ սպիտակ է, սեւ, կանաչ կամ կարմիր, ապա ոչ թէ է հասարակ սահման՝ առ որ փաղառութիւնքն շարամաւտին, այլ իւրաքանչիւր ոք տարրորդեալ է՝ ինքն ըստ ինքեան ուրոյն»⁴: Այս հարցադրմամբ ընդգծուում է լեզուի յօդաբաշխ լինելը, որը նրա էական ու հիմնական առանձնապատկանութիւնն է:

Արիստոտելեան այս դրոյթը մեկնաբանում է համակողմանիօրէն եւ գիտական ընդհանրացումներով: Մեկնիչը հանգամանօրէն հերքում է բոլոր այն առարկութիւնները, որ առանձին հեղինակներ

թեան ասէ՛ անուն եւ բայ: Այլ առանց շարամանութեան, թէ անուն, եւ թէ բայ, որպէս հանդերձեալ է ասել՝ Սոկրատէս եւ իմաստասիրէ, զայսպիսի բան ասէ, որ պիտակ է եւ ոչ իսկապէս անուն: Եւ այսպիսեացս մասնկուենք ոչ հասարակ սահման ունին, այլ ոմն սուղ, եւ ոմն երկար մասուենք»¹⁴:

Կարելոր է դիտել, որ լեզուի «տարորոշ» քանակութեամբ օժտուած լինելը սոսկ տեսականօրէն չի հրամցուում, այլեւ լեզուական իրողութիւններով ապացուցուում եւ հիմնաւորուում է, դիցուք՝ Սոկրատէս անունն է, քրոսած մեզ. վանկերի սահմանազատիչ հակադրութիւններն են (ըստ միջնադարեան մեր դպրութեան վանկատման օրինակաբանութիւնների)՝ Սոկրատէս եւ տէս, որոնք չեն ձուլուում կամ համահարթուում, բոլոր դէպքերում էլ վանկերը իրենց յարաբերական ինքնուրոյնութիւնն ու առանձնատկութիւնը պահպանում են. հէնց լեզուի այս իւրայատկութիւնն է, որ նրան օժտում է տարորոշութեամբ կամ յօդաբաշխութեամբ. «Քանզի ո՛չ է գտանել հասարակ սահման, որով փաղառութիւնսն առ ոչ ինչ հասարակ սահման Սո եւ կրա յարին առ միմեանս, եւ ոչ կրա եւ տէս, այլ իւրաքանչիւր ոք ի փաղառութեանցն զատ գոյ բնատրնցաւ: Յայտ է, թէ եւ Սոկրատէս անուն, որ է ըստ տեղոյս բան, տարորոշ է քանակ, քանզի մասնկուենքն սորա ոչ ընկալան հասարակ (իմա՝ «ընդհանուր» - Լ. Խ.) սահման՝ առ որ շարամատին (իմա՝ «որ ձուլուելու լինեն» - Լ. Խ.)»¹⁵:

Ինչպէս տեսնում ենք, լեզուի տարորոշութեան կամ յօդաբաշխութեան տեսութիւնը մեր դպրութեան մէջ պատկառելի վարդմութիւն ունի, որին հաղորդակից են եղել եւ իրենց լեզուաբանական գիտելիքները հարստացրել միջնադարի հայ ուսումնականները:

Եթէ «տարորոշ» քանակային յարաբերութիւններով օժտուածները նրա՛նք են, որոնք պահպանում են իրենցով արտայայտուած բաղադրիչ միաւորների ինքնուրոյնութիւնն ու անկախութիւնը՝ առանց համաձուլման, ապա «շարունակ» (իմա՝ չընդհատուող) բնոյթի քանակային յարաբերութիւններով օժտուածները նրա՛նք են, որոնք համահարթում եւ համաձուլում են իրենցով արտայայտուած բաղադրիչ միաւորներին մի ընդհանրութեան մէջ: Այլ կերպ ասած՝ «շարունակ» քանակ ներկայացնող միաւորները, չունենալով սահմանազատիչ շօշափելի եզրեր՝ յարաձիգ անընդհատութիւն են կազմում. «Քանզի որ ոք մասունն ունիցի իմն հասարակակամ (իմա՝ «ընդհանրական» - Լ. Խ.) սահման՝ առ որ մասունքն իւր յարիմ, յայտ է, թէ ի շարունակացն լինին»¹⁶:

Քանակային յարաբերութիւնների այս երկրորդ կարգին է պատկանում գիծը, որի բաղկացուցիչ մասերը՝ կէտերը, սերտօրէն յարակցուելով միմեանց եզրերի հետ՝ համաձուլուում եւ չընդհատուող՝ «շարունակական» յարաբերութիւն են դրսեւորում, որով եւ մակերեսին կազմում են պարզապէս գիծ՝ ճիշտ այնպէս, ինչպէս մակարդակի բաղադրիչ մասերը յարակցուում են իրար հետ եւ համահարթութեան եւ համաձուլման շնորհիւ. «Եւ գիծ շարունակ է, քանզի է՛ առնուլ հասարակ սահման՝ առ որ մասնկուենքն սորա շարամատին (իմա՝ «հարկուած» միանում են» - Լ. Խ.), կէտ, եւ մակերեսութեանն գիծ, քանզի մակարդակին մասնկուենքն առ մի իմն սահման շարամատին»¹⁷: Մարմինը կամ մակերեսով, որքնցով մարմնի մասերը յարակցուելով միասնութիւն եւ ընդհանրութիւն են կազմում: Առաւել մեծ տարողութիւն ունեցող իրերը ընդգր-

կում են ծաւալով առաւել փոքր իրերի սահմանը, իսկ վերջիններս՝ ո՛չ ամենեւին այնպէս, ինչպէս մարմնի առթիւ ասուեց՝ նրա մասերի ընդհանուր սահմանը գիծն է կամ մակերեսով. իսկ մակերեսովի համար մարմինը սահման լինել չի կարող, քանի որ մէկը եռակի չափ է ունենում, միւսը՝ երկակի:

Վահրամ Բաբունին առաւել յստակեցնում է տեսական այս բաւականին բարդ հարցադրումը իր ժամանակի համար: Գիծը այն է, որ երկայնութիւն ունի, բայց առանց լայնութեան, յարակցական բնոյթով էլ՝ չընդմիջուող «քանակ» է. «Գիծ ասի, որ երկայնութիւն ունի եւ ո՛չ լայնութիւն, եւ է՛ շարունակ քանակ»¹⁸: Գծի կազմաւորիչ միաւորները կէտերն են, որոնք ընդհանրական («հաւասար») հպման աղբրակցութիւն ունեն գծի նկատմամբ, յաջորդական շարունակականութեամբ. «Եւ մասունք սորա (իմա՝ գծի - Լ. Խ.) են կէտերն եւ հաւասար սահման առնուն մասունք գծին առ գիծն, եւ շարեալ են ի միմեանց կէտքն»¹⁹:

Իսկ մակերեսովի կազմաւորիչ միաւորը, բացատրում է Վահրամ Բաբունին, գիծն է, որը յարանման գծերի հպմամբ ու միաձուլմամբ ընդհանրական սահման ձեռք բերելով առաջացնում են մակերեսով. «Լուծումն. Որպէս գծին կէտքն են մասունք եւ շարամտեալ են առ միմեանս, այսպէս եւ մակերեսութեանն գիծն է մաս եւ հասարակ սահման ունի առ մակերեսութիւնն»²⁰:

Քանակային տեսութեան՝ գծի, մակերեսովի եւ այլ հասկացութիւնների մեկնաբանութիւնը խիստ անհրաժեշտ է՝ առաւել խորութեամբ ըմբռնելի դարձնելու համար լեզուի բնոյթը իր նիւթական ձեւի ու փոխյարաբերութեան բացայայտումով:

Ժամանակը եւ Տարածութիւնը յար եւ նման են գծին՝ իրենց քանակային յարաբերութեամբ: Այսպէս, ներկայ ժամանակը ընդհանուր շփման իր եզրերով է հանդէս գալիս անցեալ եւ ապառնի ժամանակների հետ. «Քանզի արդեան ժամանակս շարամատի առ անցեալն եւ առ հանդերձեալն»²¹:

Բացի քանակի տեսութեան տարորոշ եւ շարունակական բնոյթից, քանակային եւ ամբողջացման առումով քննուում են անաւ դիրքային առնչութիւնները հէնց քանակ կազմող միաւորների միջեւ: Դա եւս շատ կարեւոր է լեզուի կազմաւորիչների շարժարկման հուսկութիւնը հասկանալու համար: Այսպէս, որոշ երեւոյթների քանակի բաղկացուցիչները պայմանաւորուում են «Եւ դիրքային որոշ յարաբերութեամբ. «Եւ դիրք ունեցողները» - Լ. Խ.) առ միմեանս յինքեանց մասանցն բաղկամանս յինքեանց մասունքն սորա (իմա՝ «դիրք ունեցողները» - Լ. Խ.) առ միմեանց սերը որոշակի դիրք ունեն միմեանց նկատմամբ, որովհետեւ դրանցից իւրաքանչիւրը որոշակի տեղ է բռնում միւսների յարաբերութեամբ: Նոյնպէս եւ մակարդակի եւ մակերեսովի կազմաւորիչ մասերը ունեն որոշակի դիրք առանձնաբար:

Բայց կան եւ այնպիսի «շարունակական» քանակային երեւոյթներ, որոնց բաղկացուցիչ միաւորները միմեանց նկատմամբ չեն պայմանաւորուում դիրքային յիմ յարաբերութեամբ: Դիցուք՝ թուի յիմ յարաբերութիւնը չունեն դիրքային յարաբերութիւն. «Իսկ ի վերայ թուոյ ոչ ոք գտցէ մակայել (իմա՝ «ապացուցել» - Լ. Խ.), իբրու թէ մասնկուենքն սոցա դիր ինչ ինչն առ միմեանս, կամ կան ուրեք, եւ կամ որք առ որս շարամատին մասնկուենքն»²³:

Իրականում թիւը իր էութիւնը

թեան գիրկը թուերի միստիֆիկացմամբ, որ տիրապետող էր նաեւ ամբողջ Միջնադարում, ընդ որում բոլոր ազգերի դպրութիւններում: Քրիստոնէութիւնը եւս որոշ տարրեր, յատկապէս պիւթագորեան խորհրդապաշտութիւնը, որդեգրեց իր ուսմունքում հէնց ձեւաւորման ընթացքում:

Բայց հայագիր դպրութեան բուն «Համարող» մասթեմատիկոսը եւ առհասարակ ճշգրիտ գիտութիւնների հիմնադիրը իրաւամբ գիտում է VII դարի Հայ Մտքի հսկան՝ Անպնիպ Երրակացին:

Մատենադարական կողմնակի վկայութիւնները յուշում են, որ Անանիա Երրակացին ծնուած պէտք է լինի, ամենայն հաւանականութեամբ, VII դարի առաջին տասնամեակին: Իսկ մահուան թուականը անհնգում է իր հեղինակած «Ժամանակագրութեան» մէջ յիշատակուած խազարների 685 թուականին Հայաստան ասպատակած իրենիւ վերջին փաստից, որով ենթադրում է, որ Երրակացին ապրելիս է եղել մինչեւ նոյն հարիւրամեակի շուրջ իննսունական թուականները:

Հայ դպրութեան այս երախտաւորը իր մականունը ստացել է Երրակաւան-Երազգաւորսի դպրոցը առնուազն հինգ տասնամեակներ գլխաւորելու պատճառով, հազուադէպորէն յիշատակուել է նաեւ իբրեւ Անանիա Անցի՝ առժամանակ Անիում գործունէութիւն ծաւալելու հիմունքով:

Բարեբախտաբար պահպանուել է իր հեղինակային կենսագրութիւնը («Վարքը») մեր մատենագրութեան մէջ, իբրեւ հէնց առաջին եւ ամենահաւաստի աղբիւր, որը կարեւոր լոյս է սփռում իր կենսագործունէութեան տարբեր հանգրուանների ու դրուագների վրայ, Ընդարձակ եւ Համառօտ խմբագրութիւններով: Իր մասին յայտնում է, որ ինքը Երրակա-

ցին Անանիա գիւղից է եւ սկզբնական կրթութիւնը ստացել է մերձակայ վանական դպրոցում. «...Ես՝ Անանիա Երրակացի, Անանիա գիւղից, որ (սովորելով) իւրացրի մեր՝ Հայոց ազգի դպրութիւնը եւ հմտացայ Աստուածաշունչ գրքերին, օրըստօրէ լուսաւորում էի մտքիս աչքերը՝ Սաղմոսագրուի խօսքին համապատասխան»⁴¹: Բայց սոյն վկայութեամբ այնուամենայնիւ չի լուծուում «Երրակացի» մականունն առաջացումը: Կարծում ենք, հարցի պատասխանը գտնուում ենք դարձեալ Անանիա Երրակացու մի այլ հաւաստման մէջ. «Ջատկի ճառ»ում նա իր հօր մասին ասում է. «...Ես՝ Անանիա, որդի Յովհաննէսի Ծիրակումի, կազմեցի հինգ հարիւր երեսուն տարիների բոլորակ»⁴²: Այստեղից ակնհայտ է դառնում, որ «Երրակացի» մականունը առաւել հաւանականութեամբ ստացել է իր հօր անունից:

Անանիա Երրակացու ընտրած կեանքի ուղին բնորոշում է ինքնագիր Վարքում արած խոստովանութեամբ, երբ Սաղմոսարանի խօսքերը ուսման եւ գիտութեան մասին՝ առինքնել են իրեն դեռ երիտասարդութեան ժամանակ դիւթական ուժգնութեամբ. «Ամէն բանում լսում էի իմաստունների եւ իմաստութեան հետամուտ եղողների երանութեան (խօսքերը), ինչպէս այդ Սողոմոնի կողմի յանձնարարում է. «Ստացի՛ր իմաստութիւն եւ առաւել պարսաւիր տգիտութիւնը՝ իբրեւ խաւարի ծնունդ»: Համակարծիք լինելով բիբլիական այն պնդման հետ, որ գիտութիւնը մերժելը աններելի յանցագործութիւն է, ըստ վերուստ տրուած այն պայմանի, որ եթէ «Դու գիտութիւնը մերժեցիր, ես էլ քեզ կը մերժեմ»⁴³ / Անանիա Երրակացու համար առաջնորդող նշանակութիւն են ունեցել հետագայ իր ամբողջ գործունէութեան ընթացքում՝ բոլորանուէր հե-

տամուտ լինելով ճշգրիտ գիտութիւնների ուսումնասիրմանը եւ ուսուցմանը միաժամանակ: Այդպէս էլ անկեղծօրէն խոստովանում է Երրակացին. «Եւ ես զարհուրելով այս սպառնալիքներից (իմա՝ Սողոմոն իմաստունի - Լ. Խ.), երանութեանը հանգրուանեցի եւ փափագեցի հետեւել իմաստութեանը»⁴⁴:

«Գիտութիւնների մայր» ընդունելով համարողական արուեստը, Անանիա Երրակացին մասնաւորապէս հետամտում է անյազուրդ որոնումներով ու տքնանքներով տիրապետելու այդ գիտակարգին՝ յարակից բոլոր ճիւղաւորումների հետազօտմամբ միաժամանակ. «Յոյժ սիրելով համարողութեան արուեստը, խոստովանում է Երրակացին, խորհեցի, թէ առանց թուերի ոչինչ չի հիմնաւորում մայր համարեցի այն բոլոր ուսմանց»⁴⁵: Այս առնչութեամբ կարեւոր տեղեկանք է հաղորդում Հայաստանում դեռեւս VII դարում ճշգրիտ գիտութիւնների վիճակի եւ ուսուցման մասին կրթական կենտրոններում. «Եւ քանի որ Հայոց մեր աշխարհում չկար այնպիսի մէկը, որ տիրապետէր իմաստութեանը, եւ ոչ էլ Առնիսկ որեւէ տեղ գիտական գրքեր էին ճարում, ուստի մեկնեցի Յունաց երկիրը»⁴⁶:

Իր ուսումնառական գործուղումը, սակայն, բաւականին դժուարին է լինում՝ գիտական որոնումների ու հետաքրքրութիւնների բաւարարման առումով: Անանիա Երրակացին պատմում է. «Հասնելով Թէոդուպոլիս, ես այնտեղ գտայ Եղիազարոս անունով բանիմաց մէկին, որը հմուտ էր եկեղեցական գրքերին: Նա պատմեց ինձ, թէ Չորրորդ Հայքում ապրում է մասթեմատիկոս մի անձնաւորութիւն՝ Քրիստոսատուր անունով»⁴⁷:

Վեց ամիս աշակերտում է նրան, բայց մասթեմատիկական գիտելիքներով Քրիստոսատուր ուսուցիչը չի գրհացնում

իրեն: Առաւել խորը եւ ամբողջական ընդգրկումով ուզում էր մասնագիտանալ Անանիա Երրակացին. «...Համոզուեցի, որ նա սպառիչ չի տիրապետում (համարողական) գիտութեանը»⁴⁸:

Որոշում է մեկնել Կոստանդնուպոլիս՝ բիւզանդական գիտութեան եւ մշակոյթի մայրաքաղաքը: Մանօթների հանդիպելով ճանապարհին՝ խորհուրդ են դիպելով ճանապարհին՝ խորհուրդ են տալիս իրեն մեկնել Հայաստանին առաւել մերձ գտնուող Տրապիզոն քաղաքը, ուր ապրելիս եւ ուսուցանելիս է եղել բիւզանդացի Տիւքիկոս երեւելի մասթեմատիկոսը՝ մանաւանդ որ «գիտակ է հայերէն դպրութեանն ու լեզուին եւ ճանաչում է թագաւորներից»⁴⁹: Նոյնիսկ բիւզանդիայի մայրաքաղաքից ազնուականների շատ զաւակներ մասթեմատիկական գիտութիւնների ձեռքբերման համար կան մօտ են գործուղում նաեւ Կոստանդնուպոլսից:

Տիւքիկոս Ուսուցչապետը սիրալիր ընդունում է պայծառամիտ ուսումնական Անանիա Երրակացուն իր միւս սաների հետ, մանաւանդ հրճուում այն գիտակցութիւնից, որ համարողական արուեստը «հետդ տանելու ես սուրբ Գրիգորի (իմա՝ Լուսաւորչի - Լ. Խ.) երկիրը», յարում է նա: Պարզում է՝ յոյն Ուսուցչապետը, իր հերթին, երիտասարդութեան տարիներին հերթին, երիտասարդութեան եւ բարեխնամ վեղել է Հայաստանում եւ բարեխնամ վերաբերմունք տեսել Հայ ժողովրդից, ուսուցչական գիտական զգացումներ է տի եւ երախտագիտական զգացումներ է տածում հայերի նկատմամբ. «Եւ առաւել տածում հայերի նկատմամբ. «Եւ առաւել ուրախ եմ, ասում է Տիւքիկոս Ուսուցչապետը Անանիա Երրակացուն, որ ինձ է աշակերտում այդ երկիրը (իմա՝ Հայաստանը - Լ. Խ.), որովհետեւ ես իմ երիտասարդութեան տարիներին շատ ժամանակ մնացել եմ քարեպետութեան մէջ Հայոց երկրում, եւ ուրախանում եմ գիտութիւնս այնտեղ տանելու համար, քանի որ իմ գտնուած ժամա-

է յուսալ, որ այլ նմուշներ եւս կը յայտնաբերուեն ձեռագրական աղբիւրներում նաեւ ապագայում:

Հարկ է արձանագրել, վերջում, որ մաթեմատիկական գիտութիւնների պատմութեան մէջ շատ բարձր է գնահատուել Անանիա Շիրակացու քննարկուող դասագիրքը: Ռուս եւ հայ մի շարք ակադեմիկոսների համատեղ խմբագրութեամբ հրատարակուած «Հայրենական մաթեմատիկայի պատմութիւն» (ռուս.) պատկանելի աշխատութիւնում հաւաստուում է: «Ամբողջութեամբ առած, Շիրակացու թուաբանական աշխատութիւնը մեզ յայտնի հնագոյն թուաբանական դասագրքերից մէկն է եւ պարունակում է ամենից հնագոյն մեզ հասած աղիւսակները թուաբանական գործողութիւնների համար»⁸⁶: Նաեւ երբեմնի Խորհրդային Միութեան ժողովուրդների մաթեմատիկական գիտութիւնների պատմութեան մասնագէտ՝ ակադեմիկոս Ն. Դեպմանը այսպէս է բնութագրել Անանիա Շիրակացու մաթեմատիկական եւ ճշգրիտ գիտութիւնների վերաբերեալ գրած աշխատութիւնները. «Ըստ մաթեմատիկական կուլտուրայի հնութեան, Սովետական Միութեան ժողովուրդների մէջ առաջին տեղում գտնուում են հայերը: Հայերի մօտ VII դարում եղել է հրաշալի գիտնական Անանիա Շիրակացին, որի աշխատանքները մեծ քանակով հասել են մինչեւ մեր ժամանակները: Անանիա Շիրակացին եղել է մաթեմատիկոս, աստղագէտ, օդերեւութաբան, պատմաբան եւ աշխարհագրագէտ: Իր աշխատութիւններում, բացի զուտ մաթեմատիկական խնդիրներից, արծարծում է նաեւ այլ հարցեր՝ երկրի գնդաձեւութեան, Լուսնի եւ Արեգակի խաւարումների, բազմանկիւն թուերի, օրացոյցային հաշուումների, արեգակնային ժամացոյցների մասին, եւ այդ բոլորն ասել է այն ժամանակաշրջանում, երբ երոպական ժողովուրդների մօտ գրեթէ ոչ ոք

այդ հարցերի ուսումնասիրութեամբ չէր զբաղուել»⁸⁷:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1 Դաւիթ Անյաղթ, Մեկնութիւն Ստորագութեանց Արիստոտելի, Երեւան, 1961, էջ 72:
- 2 Անդ:
- 3 Անդ, էջ 72-74:
- 4 Անդ, էջ 80:
- 5 Վահրամ Բաբունի, Լուծումը «Ստորագութեանց Արիստոտելի», աշխատասիրութեամբ Գ. Գրիգորեանի, Երեւան, 1967, էջ 68:
- 6 Անդ, էջ 16:
- 7 Անդ, էջ 22-24:
- 8 Տե՛ս Դաւիթի՝ «Մեկնութիւն Ստորագութեանց Արիստոտելի» երկը, Երեւան, 1961, էջ 80:
- 9 Անդ, էջ 80-82:
- 10 Վահրամ Բաբունի, Լուծումը «Ստորագութեանց» Արիստոտելի, էջ 16:
- 11 Անդ, էջ 80-82:
- 12 Տե՛ս Դաւիթի՝ «Մեկնութիւն Ստորագութեանց Արիստոտելի» երկը, էջ 82:
- 13 Անդ:
- 14 Վահրամ Բաբունի, Լուծումը «Ստորագութեանց» Արիստոտելի, էջ 68-70:
- 15 Տե՛ս Դաւիթի՝ «Մեկնութիւն Ստորագութեանց Արիստոտելի», էջ 84:
- 16 Անդ:
- 17 Անդ:
- 18 Տե՛ս Վահրամ Բաբունի, Լուծումը «Ստորագութեանց Արիստոտելի», էջ 70:
- 19 Անդ:
- 20 Անդ:
- 21 Տե՛ս Դաւիթի՝ «Մեկնութիւն Ստորագութեանց Արիստոտելի», էջ 84:
- 22 Անդ, էջ 88:
- 23 Անդ, էջ 92:
- 24 Անդ, էջ 94:
- 25 Անդ:
- 26 Անդ, էջ 92:
- 27 Անդ:
- 28 Անդ:
- 29 Տե՛ս Վահրամ Բաբունի, Լուծումը «Ստորագութեանց Արիստոտելի», էջ 74:
- 30 Տե՛ս Դաւիթի՝ «Մեկնութիւն Ստորագութեանց Արիստոտելի», էջ 94:
- 31 Տե՛ս Վահրամ Բաբունի, «Մեկնութիւն Ստորագութեանց Արիստոտելի», էջ 74:
- 32 Անդ:
- 33 Դաւիթ Անյաղթ, Սահմանք իմաստասիրութեան, էջ 134:

- 34 Անդ, էջ 146-148:
- 35 Անդ, էջ 148:
- 36 Անդ, էջ 126:
- 37 Անդ, էջ 134:
- 38 Անդ:
- 39 Տե՛ս «Նոր Բառագիրք Հայկազեան լեզուի», Բ. Բ., Երեւան, 1991, էջ 24:
- 40 Դաւիթ Անյաղթ, Սահմանք իմաստասիրութեան, էջ 132:
- 41 Անանիա Շիրակացի, Մատենագրութիւն, թարգմանութիւնը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները Ա. Գ. Արքաբանեանի եւ Գ. Բ. Պետրոսեանի, Երեւան, 1979, էջ 25:
- 42 Անդ, էջ 173:
- 43 Անդ, էջ 25:
- 44 Անդ:
- 45 Անդ:
- 46 Անդ:
- 47 Անդ:
- 48 Անդ, էջ 25-26:
- 49 Անդ, էջ 26:
- 50 Անդ:
- 51 Անդ:
- 52 Անդ, էջ 27:
- 53 Անդ, էջ 26-27:
- 54 Անդ, էջ 27:
- 55 Անդ:
- 56 Անդ, էջ 28:
- 57 Անդ:
- 58 Անդ, էջ 30:
- 59 Անդ:
- 60 Անդ, էջ 28:
- 61 Անդ:
- 62 Անդ:
- 63 Անդ, էջ 28-29:
- 64 Անդ, էջ 29:
- 65 Անդ:
- 66 Տե՛ս Ա. Արքաբանեան, «Անանիա Շիրակացու մատենագրութիւնը», Երեւան, 1944: Նաեւ՝ «Անանիա Շիրակացի, Մատենագրութիւն, թարգմանութիւնը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները Ա. Գ. Արքաբանեանի եւ Գ. Բ. Պետրոսեանի», Երեւան, 1979:

- 67 «Անանիա Շիրակացի, Մատենագրութիւն», էջ 30:
- 68 Ա. Արքաբանեան, Շիրակացու մատենագրութիւնը, Երեւան, 1944, էջ 54:
- 69 Նոյնի՝ «Անանիա Շիրակացի» յօդուածը, տե՛ս «Հայ մշակոյթի նշանատր գործիչները. V-XVIII դարեր», Երեւան, 1976, էջ 113:
- 70 Նոյնի՝ «Անանիա Շիրակացի, Մատենագրութիւն», Երեւան, էջ 333, ծան. 2, տե՛ս նաեւ 30-63 էջերը:
- 71 Նոյնի՝ «Անանիա Շիրակացի» յօդուածը, տե՛ս «Հայ մշակոյթի նշանատր գործիչները. V-XVIII դարեր», էջ 114, նաեւ «Անանիա Շիրակացի. Մատենագրութիւն», ծան. 3, էջ 333:
- 72 Նոյնի՝ «Անանիա Շիրակացի» յօդուածը, տե՛ս «Հայ մշակոյթի նշանատր գործիչները...», էջ 114, նաեւ «Անանիա Շիրակացի. Մատենագրութիւն», էջ 333:
- 73 Տե՛ս «Անանիա Շիրակացի. Մատենագրութիւն», էջ 32:
- 74 Տե՛ս անդ, ծանօթ. 3:
- 75 Տե՛ս անդ, էջ 35-47:
- 76 Անդ, էջ 35:
- 77 Անդ:
- 78 «Անանիա Շիրակացի. Մատենագրութիւն», էջ 333, ծանօթ. 5:
- 79 Տե՛ս «Հայ մշակոյթի նշանատր գործիչները...», էջ 114:
- 80 Տե՛ս «Անանիա Շիրակացի. Մատենագրութիւն», էջ 54-63:
- 81 Տե՛ս անդ, էջ 56-57:
- 82 Անդ, էջ 57:
- 83 Անդ, էջ 62:
- 84 Անդ:
- 85 Անդ:
- 86 "История Отечественной Математики", Киев, т. 1, 1966, стр. 445.
- 87 Н. Я. Деппман. История Арифметики, Москва, 1959: Վերջին երկու քաղուածքներն էլ ըստ Ա. Արքաբանեանի եւ Գ. Պետրոսեանի նշուած աշխատութեան, էջ 13-14: